ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

ԹԵՄԱ __«Համագործակցային ուսուցումը պատմության դասերին»_____

_____

Կազմեց՝ Գայանե Վոլոդյայի Ալավերդյան (անուն, ազգանուն, հայրանուն)

Կապանի Հունան Ավետիսյանի անվան հ.9 ա/դ դպրոց

(դպրոցիանվանումը)

Ղեկավար՝ Լիլիթ Առաքելյան

<<Կապանի N2 ավագդպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստողկազմակերպությանանվանումը)

Կապան 2022թ

Բովանդակություն

Նախաբան

ԳԼՈՒԽ Ա

Համագործակցային ուսումնառության ակնարկ

Գլուխ Բ

Համագործակցային ուսումնառության բովանդակությունը

Գլուխ Գ

Համագործակցային ուսումնառության տարրերը

Գլուխ Դ

Արդյունավետ թիմի ստեղծում

Գլուխ Ե

Համագործակցային ուսուցման մեթոդներ եւ դրանց կիրառման իմ փորձը պատմության դասին

Եզրակացություն

Գրականություն

Նախաբան

Աշխարհը գտնվում է հարափոփոխ զարգացման շրջապտույտի մեջ:Այդ փոփոխություններն առաջնահերթ իրենց անիվի մեջ են առնում հատկապես կրթական ոլորտը: Իմաստուններից մեկը ասել է,որ ամենակայուն բանն աշխարում փոփոխություններն են: Դպրոցը դինամիկ սոցիալական համակարգ է,ուստի և միշտ վերանայման կարիք ունի: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը:

Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակաությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը:

- Հետազոտական աշխատանքում անդրադառնում եմ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը,քանի որ այսօր աշխարհն ու մարդը կարիք ունեն համագործակցության:Այն խիստ անհրաժեշտ է դպրոցին, աշակերտին ու ուսուցչին,հասարակությանը:
- Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրունության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:
- Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է պատմության դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական

հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել ամբողջ կյանքի ընթացքում:

- Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է աշխատանքը:
- Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

ԳԼՈՒԽ Ա

Համագործակցային ուսումնառության ակնարկ

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:[1]

Արևմտյան հետազոտողների աշխատանքները ցույց են տալիս,որ համագործակցային ուսուցումը հիմնված է երեք մոտեցումների վրա՝

- սոցիալական փոխկախվածություն
- ճանաչողական զարգացում
- վարքաբանական ուսուցում:

[1] Ա. Է. Ափոյան ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ. էջ336

Համագործակցային ուսուցմանը նվիրված հետազոտությունները ցույց են տալիս,որ ամենատարածվածը սոցիալական փոխկախվածության տեսությունն է: Ըստ այդ տեսության ժամանակակից մեկնաբանության՝»…սոցիալական փոխկապվածության կառուցվածքով է որոշվում, թե ինչպես են անհատները փոխներգործում միմյանց վրա ,որն էլ իր հերթին որոշում է փոխներգործության արդյունքները»:[2]

Համաշխարհային կրթական համակարգերում համագործակցային ուսումնառության վերաբերյալ հետազոտություններ կատարվել են 1920-ական թվականներից,իսկ դասարաններում ուսումնառության հետազոտումն ու կիրառումը՝1970-ական թվականների սկզբներից:Ինչ տալիս այն.



Ներկայումս ամբողջ աշխարհում հետազոտողներն ուսումնասիրում են համագործակցային ուսումնառության սկզբունքների գործնական կիրառությունները: ՈՒսուցման համագործակցային հնարները սկսեին զարգանալ վերջին 30 տարիների ընթացքում: Համագործակցային ուսումնառության՝առավել լայնորեն կիրառվող մեթոդները մշակվել և հետազոտվել են Դ.Ջոնսոնի և Ռ.Ջոնսոնի ու նրանց գործընկերների կողմից՝Մինեսոտայի համալսարանում:[3]

[2] Մ.Աստվածատրյան և ուրիշներ<<ՈՒսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում>>,Երեւան 2007, էջ104
[3] Գ.Հովհաննիսյան և ուրիշներ,Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան 2004, էջ 146

Գլուխ Բ

Համագործակցային ուսումնառության բովանդակությունը

Համագործակցային ուսուցման կազմակերպումը համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:[4]

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ, ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են

- երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ,
- նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային

[4] Տե՛ս Ափոյան, էջ 337

մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:[5]

Համագործակցային ուսումնառության հատկանիշները



[5] Տե՛ս Ափոյան, էջ 338

Գլուխ Գ

Համագործակցային ուսումնառության տարրերը

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Ըստ ամերիկյան նշանավոր ուսումնասիրողներ Ջոնսոնների համագործակ ցային ուսումնառությունը ունի հինգ տարր



- Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

- Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար։
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։
- Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը։
- Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր։ Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը։

Ստեղծագործական գործունեությունը հաճախ ընկալվում է որպես մեկուսի ,խիստ անձնական աշխատանք: Մենք պատկերացնում ենք գրողին ՝ մենակ նստած գրելիս,նկարչին՝առավոտ վաղ ,դեռ արևածագից առաջ ինքնամոռաց նկարելիս, երաժիշտը մեզ պատկերվում է իր կատուների համար նվագելիս:Իսկ իրականում մարդիկ շատ հաճախ աշխատում են խմբով եւ համագործակցությունը նույնպես կարող է արթնացնել ստեղծագործական միտքը: Քանի, որ կյանքն ինքնին ենթադրում է աշխատանք,շփում եւ հաղորդակցություն մարդկանց հետ, անհրաժեշտ է

համագործակցությունն առավել ստեղծագործական դարձնել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորելու անհատական ոճերի,սովորողների ինքնուրույնության եւ շարժառիների իրականացման լավագույն ձեւը համագործակցային ուսուցումն է: Միասին աշխատելով՝ աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել:

Գլուխ Դ

Արդյունավետ թիմի ստեղծում

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել : Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին:

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

ա) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում:Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.

բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.

ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման խաղանիշեր» (3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

է) Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

ՈՒսումնառության այս ռազմավարության մեջ ուսումնասիրողները առանձնացնում են հետեւյալ ձեւերը՝

- *համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր*

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

- խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
- պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
- բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
- յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

- **համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր**

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:

- **համագործակցային ուսուցման հենակետային խմբեր**

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցության աստիճանից կախված ՝ դասապրոցեսում հնարավոր են փոքր խմբերով աշխատանքի հետեյալ մակարդակները.

- Կեղծ խմբեր
  - թեեւ աշակերտները աշխատում են խմբերով,բայց առանձնակի շահագրգռվածություն չեն դրսեւորում,
  - մտածում են,որ իրենք կգնահատվեն անհատական աշխատանքի համար,
  - արտաքուստ քննարկում են,հոգու խորքում՝մրցակցում,
  - նրանք միմյանցից քողարկում են գիտելիքները,իրար շփոթեցնում են:
- Ավանդական խմբեր
  - Աշակերտները բաժանված են խմբերի,բայց առաջադրանքը այնպես է տրված ,որ համատեղ աշխատանքի կարիք չի զգացվում,
  - Աշխատում են անհատական՝առանց մտքերի փոխանակման ու համագործակցության:
- Համագործակցային խմբեր
  - Աշակերտները հասկանում են,որ իրենց հաջողությունը կախված է բոլորի ներդրումից,

- բնորոշ է իմային ոգին,
- ընդանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը,
- փոխկախվածությունը,
- արդյունքը գնահատելու ու վերանայելու կարողությունը:

➢ Բարձրակարգ համագործակցային խումբ

- Ներառում է նախորդի բոլոր հատկանիշները,
- անդամները աջակցում են յուրաքանչյուրի անհատական առաջընացին,
- գործում են փոխադարձ նվիրվածության սկզբունքով:

Այսպիսով, ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային: Աշակերտներին նույն վայրում նստացնելը, նույն առաջադրանք տալը դեռեւս չի նշանակում համագործակցային ուսուցում: Հետեւաբար՝ «ՈՒսուցիչները պետք է նկատի ունենան այն հանգամանքը ,որ փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է:Բայց պետք է հետեւողականորն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը,որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբով աշխատանքը»:[6]

Այս ուսումնառության արդյունավետությունը մեծապես կախված է արդյունավետ թիմի սեղծումից:Թիմի ստեղծման ընթացքում խումբը փորձում է իր համատեղ գործունեությունը եւ աշխատում է ստեղծել թիմի յուրաքանչյուր անդամի ներդրումը խրախուսող մթնոլորտ:Նրանց եռանդը նպատակաուղղվում է խնդիրների լուծմանը,առաջադրանքների կատարման արդյունավետության ապահովմանը եւ թիմի բոլոր անդամների ներուժի ու հնարավորությունների առավելագույնս օգտագործումը `թիմի նպատակներին հասնելու համար:

Թիմի ստեղծումը հաջողվում է, երբ պահպանվում են հետեւյալ պայմանները

[6] Ա.Արնաուդյան և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երեւան 2004, էջ23

1. Մեծ է թիմի անդամների փոխադարձ կախվածությունը:Յուրաքնչյուրն ունի իր հանձնարարությունը,իսկ ընդհանուր խնդրի լուծման ,ցանկալի արդյունքների ձեռք բերման համար խիստ կարեւոր է խմբային աշխատանքը:
2. Թիմի ղեկավարը ունի հաղորդակցության լավ հմտություններ,հակված է համագործակցային աշխաքտանքի զարգացմանը: Խմբի անդամները հնարավորություն են ստանում հանդես գալ խմբի ղեկավարի դերում այն դեպքում, երբ իրենց հմտություններն ու փորձը համապատասխանում են թիմի պահանջներին:
3. Թիմի յուրաքանչյուր անդամ կարող է եւ պատրաստակամ է ներդնել իր փորձը,հմտությունները `ապահվելով թիմի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմանները:
4. Ստեղծվում է մթնոլորտ ,որում խմբի անդամները իրենց հանգիստ ու հարմարավետ են զգում:
5. Թիմակիցները փոխադարձաբար վստահում են միմյանց եւ հավատում ,որ խմբի յուրաքանչուր անդամ ընդունակ է իր ներդրուն ունենալ խմբի աշխատանքում:
6. Թիմը եւ նրա անդամները ի վիճակի են համարձակ քայլեր անել :
7. Կարողանում են վերահսկել խմբի գործունեությունը,գտնում սխալներն ու բացթողումները՝ առանց որեւէ մեկին մեղադրելու:Սրա շնորհիվ նրանք սովորում են դասեր քաղել սեփական սխալներից:
8. Թիմն ընդունակ է նոր գաղափարներ ստեղծել ու իրագործել դրանք:

«Արդյունավետ թիմ հնարավոր է ավելի հեշտ ստեղծել,երբ խմբի բոլոր անդամները միասին են աշխատում փոխադարձ հետաքրքրություն եւ ընդհանուր կարեւորություն ունեցող խնդիրների լուծման համար»:[7]/

[7] Մելանյա Աստվածատրյան եւ ուրիշներ, ՈՒսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Երեւան2003, էջ 118

Համագործակցության փոխհարաբերության չափորոշիչներ

- Մեղմե՛ք լարվածությունը եւ եղե՛ք սիրալիր:
- Նստարանները դասավորե՛ք ըստ հարմարություն:
- Կիրառե՛ք դրական տրամադրվածություն,քաջալերե՛ք եւ արտահայտեք զոհունակություն:
- Անհամաձայնությունը բարեկիրթ ձեւով ներկայացրեք:
- Առաջադրանքից մի՛ շեղվեք:

Գլուխ Ե

Համագործակցային ուսուցման մեթոդներ եւ դրանց կիրառման իմ փորձը պատմության դասին

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային

աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրուության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է պատմության դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում: Աշխատանքում կխոսենք Սահլբերգի կողմից առաջադրված մասնակցությունը խթանող տարբեր միջոցներից մեկի, զույգերով աշխատանքի, «Շրջվիր դեպի զույգդ» և շատերի կողմից կիրառվող «Պրիզմա» մեթոդի կիրառելիության և արդյունավետության մասին: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Հասկանալով,որ համագործակցությունը մեծ ուժ է՝պատմության դասերին շատ եմ այդ ռազմավարությունը:Հիմնականում կազմում եմ տարասեռ խմբեր:Աշխատանքային փորձս ցույց է տալիս,որ այդպիսի խմբերը շատ արդյունավետ են գործում,յուրաքանչյուր անդամ իր կարողությունների չափով հաջողություն է բերում թիմին:Ելնելով թեմայի նպատակից ու բովանդակությունից ուսումնական պրոցեսում առավել հաճախ եմ օգտագործում հետևյալ ռազմավարությունները՝

- Պատմական համաժողովի մոդելավորում/Բեռլինի վեհաժողով,Փարիզի խորհրդաժողով և այլն[8]
- Փոփոխվող խմբերով քննարկում
- Պատմությունը դատարանի առջև
- Խճանկար
- Կլոր սեղան
- Շրջագայություն պատկերասրահում
- Պատմական խճանակար/հատկապես ամփոփիչ դասերի համար/

Խմբային կամ երբեմն անվանում ենք թիմային աշխատանքը համագործակցային ուսումնառության տեսակներից է:Համագործակցային ուսումնառության մեթոդները կարող են արդյունավետ գործել ցանկացած դասարանում՝ ցանկացած բովանդակությամբ թեմա ուսուցանելու համար:Խմբային աշխատանքի համար՝

- ❖ աշակերտները համագործակցում են՝միասին սովորելու նպատակով
- ❖ պատասխանատու են ինչպես իրենց,այնպես էլ խմբի անդամների ուսումնառության համար
- ❖ հստակեցվում է թիմի նպատակը
- ❖ կանխատեսվում է խմբի հաջողությունը:

- Խմբերը կարելի է ստեղծել համասեռ,տարասեռ,ինչպես նաև պատահական՝տարբեր հատկանիշների հիման վրա:
- Փոքր խմբի չափը կարող է տատանվել 3-7 աշակերտների սահմանում:

[8] «Պարադիգմա» կրթական հիմնադրամ /2020/: Գիրք պատմության ուսուցման.ինչո՞ւ ,ինչպե՞ս, էջ147-148

- Առավել արդյունավետ է 4 հոգանոց խումբը:

  Աշխատանքը սկսելուց առաջ շատ կարևոր է՝

  - հանգամանալից ներկայացնել առաջադրանքը
  - խմբերին հանձնարարել կատարել աշխատանքի բաժանում
  - պարզել,արդյոք խմբերը ճիշտ են հասկացելառաջադրանքը:

1.Խմբային աշխատանքի օրինակը ,որ պետք է ներկայացնեմ, 11 դասարանի հայոց պատմությունից է՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկիզբը»: Ելնելով թեմայի ծավալից, բովանդակության բարդությունից և կարևորությունից ընտրել եմ «Փոփոխվող խմբերով քննարկում» մարտավարությունը:

Ստեղծում եմ 4 տարասեռ խմբեր, որոնց հանձնարարվում է հետևյալ նույն բաղադրիչները՝

1. Մեծ եղեռնի հետևանքները
2. Տերությունների և միջազգայի հանրության վերաբերմունքը
3. «Ցեղասպանություն» հասկացությունը
4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առաջին քայլերը:

- Խմբերում ստեղծում ենք նույն հարցի վերաբերյալ փորձագետներ՝ տալով համարներ:
- Խմբերի ներսում ուսումնասիրում են ուսումնական նյութը:
- Խմբի յուրաքանչյուր անդամ մյուսներին ներկայացնում է իր ,,նեղ,, մասնագիտական նյութը:
- Կատարվում է քննարկում և ընդհանրացում նույն խմբի ներսում:
- Հաջորդ քայլում տարբեր համարներ ունեցող աշակերտները հավաքվում են նոր,փորձագիտական խմբերում:Նրանք ներկայացնում են իրենց տեսակետները,քննարկում,կատարում եզրահանգումներ:
- Կարելի է նաև կազմել նոր,խառը խմբեր ու կազմակերպել քննարկում:
- Սա հրաշալի ռազմավարություն էսովորողների մոտ տարբեր անձանց հետ քննարկումներ վարելու,նույն խնդրի շուրջ տարբեր տեսակետներ համադրելու հմտություններ զարգացնելու համար:

- Շատ կարևոր է,որ խմբի ներսում ուսումնասիրվում է ամբողջ նյութը,իսկ խմբերն էլ ծանոթանում են մյուսների տեսակետներին ու կարծիքներին:
- Կախված դասարանում աշակերտների թվից նախապես կարելի է ստեղծել ևս մի խումբ,որն կուսումնասիրի սկզբնաղբյուրային նյութերը:
- Քննարկումից հետո յուրաքանչյուր փորձագետ վերադառնում է իր մայր խումբը և ներկայացնում մյուս 3 խմբերի տեսակետներն ու կարծիքները բովանդակային բաղադրիչների վերաբերյալ:

Ինչպես մյուս համագործակցային ռազմավարությունները,այս մեկը նույնպես նպաստում է սովորոների կարողությունների ըստ ամենայնի բացահայտմանը,դրական փոխկապվածությանը,թիմային պատասխանատվությանը:Իսկ սովորողների հնարավորությունների տարբերություններն ավելի շատ դառնում են միջոց,ռեսուրս,քան հիմնախնդիր:

Լսելով խմբերի աշխատանքը գնահատումը կատարում ենք նախապես մշակած ռուբրիկով,ինչպես նաև աշակերտները կատարում փոխադարձ գնահատում:

2.Համագործակցային արդյունավետ աշխատանք է ստացվում նաև գործնական աշխատանքների ժամանակ:

Գործնական աշխատանքի հետաքրքիր ձեւերից է սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը :Այն `

- Ուսումնական գործընթացը դարձնում է արդյունավետ ու հետաքրքիր
- Խթանում է ուսումնական գործընթացը
- Հնարավորություն է տալիս աշակերտներին տեղեկացնել հակասությունների և տարաձայնությունների մասին,մասնակից դարձնել քննարկմանը
- Հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել պատմական դարաշրջանի և նյութի մասին
- Այլընտրանք է դասագրքին՝ լրացնելու իմաստով:

Կարևոր է սկզբնաղբյուրի ընտրության չափանիշների սահմանումը՝

- Հետաքրքրության աստիճանը
- Բարդության աստիճանը
- Ծավալը
- Տեսակետների բազմազանությունը
- Աղբյուրների բազմազանությունը
- Հասանելիությունը

Գործնական աշխատանքը առավել հետաքրքիր և արդյունավետ է դառնում հատկապես համախմբային խմբերով աշխատելու դեպքում:Դասի կազմակերպման համար անհրաժեշտ է `

- Ճշտել դասի կազմակերպման ձևերը/գրավոր աշխատանք,բանավոր ներկայացում,դերային խաղ ,քննարկում/
- Դասի ընթացք/անհատական,խմբեր,դասարան/
- Ներկայացման ձև/հարցաթերթիկ,ակնարկ,պաստառ,նկար,բանավոր քննարկում/
- Ժամանակ
- Գնահատում/թեստ,միավորային գնահատում,ռուբրիկ/

Գործնական աշխատանքի պլան

Դասարան՝10,հայոց պատմություն

Թեմա ` Պապ թագավոր

Դասարան 10

Կազմակերպման ձևը՝գրավոր աշխատանք

Նպատակ՝

- Կիրառել յուրացրած տեսական նյութը գործնականում
- Ներկայացնել պատմական դարաշրջանը,Պապի գործունեությունը
- Հետազոտել տարբեր աղբյուրներ,համեմատել դրանք

- Զարգացնել հետազոտական,քննադատական մտածողության, բացահայտելու,մեկնաբանելու կարողություններ

Վերջնարդյունքներ՝

Սովորողները կկարողանան

- Ներկայացնել Պապի գործունեության հետ կապված մի շարք հարցեր՝ հենվելով սկզբնաղբյուրների նյութի վրա
- Վերհանել սկզբնաղբյուրների մեջ առկա տարբերությունները
- Բացահայտել հայկական աղբյուրներում,մասնավորապես Փավստոս Բուզանդի մոտ,ներկայացված Պապի կերպարի որոշ բացասական գծեր:
- Զարգացնել ինքնուրույն հետազոտական և վերլուծական աշխատանքի,քննադատական վերլուծության կարողություններ:

Հարցաթերթիկ/կարելի կազմել յուրաքանչյուր խմբի համա տարբեր կամ նույնանման/

1. Ինչպիսի՞ փաստաթուղթ է սկզբնաղբյուրը:
2. Ո՞վ է հեղինակը:/Ովքե՞ր են հեղինակները/
3. Ո՞ր դարաշրջանի դեպքերն են պատկերված սկզբնաղբյուրում:
4. Ի՞նչ քաղաքականություն է իրականացրել Պապը հայոց եկեղեցու նկատմամբ,ինչպե՞ս է դա արտացոլված սկզբնաղբյուրում:
5. Որտե՞ղ սպանվեց Պապը:Ինչու՞ հենց այդ վայրում:
6. Ովքե՞ր էին շահագրգիռ այդ սպանությանը:
7. Ինչու՞ սպանեցին Պապին:
8. Նամակ կամ հարց հեղինակին:
9. Համեմատել հայկական և օտար սկզբնաղբյուրների նյութերը Պապի կերպարի վերաբերյալ:
10. Ի՞նչ զգացմունքներ առաջացրին սկզբնաղբյուրները իրենց մոտ:

Որպես սկզբնաղբյուր տալ Փավստոս Բուզանդի,Ամմիանոս Մարկելինոսի գրքերից համապատասխան հատվածներ,նյութեր քրեստոմատիայից։[9]։Գնահատումը կատարվում է կամ ռուբրիկով կամ միավորային։

[9] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա,հ.1,Երևան, 1981, էջ 506-507

Եզրակացություն

Կյանքի հարափոփոխ ընթացքը մարդուն պարտադրում է պատրաստ լինել փոփոխություններին,փնտրել ու գտնել հնարներ տարբեր իրավիճակներում գործելու և ունեցած գիտելիքները կիրառելու համար:Կրթության ոլորտը նույնպես անընդհատ բարեփոխման կարիք է ունենում: ՈՒսուցման գործընթացում հաջողված ու արդյունավետ ռազմավարություններից է համագործակցային աշխատանքը: ՈՒսումնառության այս ձևը հնարավորություն է տալիս սովորողներին իրենց գիտելիքներն ու փոնձը փոխանակել դասընկերների հետ,համատեղ խնդիրներ լուծել,նախագծեր կազմել ու իրականացնել դրանք: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեթոդների կիրառումն ուսուցչից պահանջում է մեծ հմտություն:Որպեսզի այն ինքնանպատակ չլինի և արդյունք տա,մանկավարժը պետք է նախապես պատրաստվի,նախագծի անելիքը,տեսնի վերջնարդյունքը, ընտրի տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառի այլ լուծումներ:

Պետք է հիշել,որ՝

- ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային: Անհաժեշտ է ընտրել այնպիսի թեմա, նպատակ, ուսումնական ընթացք, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան:
- ուսումնական նյութն ու մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ դասարանի կարիքներին
- հաշվի առնել այն խնդիրները,որ կարող են ծագել ընթացքում՝բացառելու համար կոնֆլիտները և ձախողումները

- կարևորել ինչպես ամբողջ խմբի, այնպես էլ յուրաքանչյուր անդամի ներդրումը:

Ասույթներ համագործակցության մասին

- ❖ Ավելի լավ է ճկվել,քան կոտրվել: /շոտլանդական/
- ❖ Մեկ նետը հեշտությամբ է կոտրվում,իսկ տասը նետից կամված կապոցը՝ոչ: /ճապոնական/
- ❖ Գյուղ կանգնի՝գերան կկոտրի:/հայկական/
- ❖ Կամ կսովորենք եղբայրների պես ապրել,կամ էլ հիմարների պես կմեռնենք: /Մարտին Լյութեր Քինգ/
- ❖ Այս մի բուռ աշխարհում մարդիկ այլևս անծանոթների պես չեն կարող ապրել: /Ա.Սթիվենսոն/

Գրականություն

1. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search
2. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview
3. Մ. Աստվածատրյան և ուրիշներ, ՈՒսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, ԱՅՌԵՔՍ , ԵՐԵՎԱՆ2003
4. Մ. Աստվածատրյան և ուրիշներ, Ինտեգրված թեմատիկ միավոր, ԱՅՐԵՔՍ, ԵՐԵՎԱՆ, 2003
5. Մ. Աստվածատրյան և ուրիշներ» ՈՒսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում»,Երեւան 2007
6. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ.,Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն, Երևան ,2004
7. ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ГЮМРИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ ИМ. М. НАЛБАНДЯНА GYUMRI STATE PEDAGOGICAL INSTITUTE AFTER M. NALBANDYAN У Ч Е Н Ы Е З А П И С К И Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր S C I E N T I F I C P R O C E E D I N G S Պրակ Բ Выпуск Б Issue B Դ Ա Ս Ա Վ Ա Ն Դ Մ Ա Ն Մ Ե Թ Ո Դ Ի Կ Ա ՀՏԴ 80 Ա. Է. Ափոյան ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
8. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն.Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006
9. Պատմություն և Հասարակագիտություն. Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր (կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր և նոր մեթոդներ) Երևան Հրատարակչություն, 2007
10. Թեմատիկ միավորների ժողովածու, Ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների և ուսուցիչ- վերապատրաստողների համար, ԱՅՌԵՔՍ, ԵՐԵՎԱՆ 2005